Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն իրականացրել է հետևյալ աշխատանքներն՝ ըստ գործունեության բնագավառների

Գիտության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ իրականացված միջոցառումները

Գիտության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ 2008 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1.1. Մշակվել է «ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրերի» ձևը, և իրականացվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող շուրջ 100 կազմակերպությունների անձնագրավորում: Ստեղծվել է կազմակերպությունների տվյալների էլեկտրոնային շտեմարան: Իրականացվել է այդ տվյալների մշակում, որի հիման վրա ՀՀ կառավարություն է ներկայացվել ամփոփ վերլուծություն:

1.2. Մշակվել է գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների ժամանակացույցը, որով հաստատվել է գիտության ոլորտի բարեփոխումներով նախատեսված միջոցառումների փուլերի և հաջորդականության ծրագիրը:

1.3. Մշակվել են Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները:

1.4. Մշակվել են գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և հաստատման կարգը, ինչպես նաև գիտական կենտրոնների ստեղծման հայտի ձևաչափը: Գիտական կենտրոններում անհրաժեշտ է միավորել միևնույն գիտական ուղղություն ունեցող գիտական կազմակերպությունները՝ անկախ գերատեսչական պատկանելությունից:

1.5. Մշակման փուլում է գտնվում գիտական կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերի սանդղակը: Նորաստեղծ գիտական կենտրոններում և գիտական կազմակերպություններում ընդհանրապես անհրաժեշտ է հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները՝ մի կողմից արմատավորելով ժամանակակից մենեջմենթ (գործադիր տնօրենի պաշտոնի արժեքավորմամբ, վարչական ղեկավար պաշտոններում նշանակվածների նկատմամբ ռոտացիայի սկզբունքի կիրառմամբ և այլն), մյուս կողմից վարչական ազդեցությունից հանելով գիտական քննարկումների ու որոշումների ընդունման գործառույթները՝ գիտական խորհրդի ղեկավարումն իրականացնելով տվյալ ուղղության գիտական ղեկավարի միջոցով:

1.6. Գիտության ոլորտի արդյունավետ բարեփոխումների համար առաջնահերթ խնդիր է փորձագիտական անկախ և մշտական գործող համակարգի գործունեության

ապահովումը, ինչը հնարավորություն կտա որակապես բարձրացնել գիտական ծրագրերի, թեմաների ընտրության արդյունավետությունը և վերջնական արդյունքում կնպաստի գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը և միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտությունների իրականացմանը:

Ստեղծվել է գիտական փորձագիտական անկախ համակարգ, որի ձևավորման շրջանակներում՝

ա) իրականացվել է ՀՀ գիտական կազմակերպություններում և բուհերում աշխատող գիտնականների տվյալների հավաքագրում, մուտքագրում, կոդավորում, տվյալների շտեմարանի ստեղծում: Շտեմարանում ընդգրկված են 1200 գիտանականի տվյալներ:

գ) որոշ մասնագիտությունների գծով (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) ստեղծվել է արտասահմանում աշխատող հայ գիտնականների տվյալների շտեմարան:

Մշակվել են գիտական փորձագիտական համակարգի ձևավորման ու աշխատանքների կազմակերպման կարգերը՝

ա) «Գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման կարգ»,

բ) «Գիտական ծրագրերի և թեմաների հայտերի ու հաշվետվությունների գիտական փորձաքննության կարգ»:

գ) «Գիտական ծրագրերի և թեմաների հայտերի ու հաշվետվությունների հաստատման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգ»:

1.7. Մշակվել են գիտաժողովների, գիտական երիտասարդական դպրոցների, սեմինարների և այլ գիտական միջոցառումների ֆինանսավորման հայտերի գնահատման սկզբունքները, չափանիշներն ու հայտի լրացման ձևը:

1.8. Մշակման փուլում է գտնվում գիտական կազմակերպությունների և գիտական աշխատողների գործունեության արդյունավետության գնահատման ու գիտական կազմակերպությունների ռեյտինգավորման մեթոդաբանությունը:

1.9. Մշակվել է հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը: Ծրագիրը նախատեսում է ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների իրականացմանը մասնակից դարձնել արտասահմանյան հայ գիտանականներին: Նախատեսվում է ծրագիրն իրականացնել ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ:

1.10. ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ միասին մշակվել է «Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի գիտության զարգացման գերակա ուղղությունների (2009-2013թթ.) հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Գիտության ոլորտի բարեփոխումների

գործընթացում նպատակահարմար է ընդգրկել նաև շահագրգիռ նախարարություններ՝ իրենց ոլորտի գիտական ուղղությունների գերակայությունները որոշելու և ըստ այդ գերակայությունների հաստատագրված պետական-նպատակային ծրագրերը կազմելու ու իրականացնելու համար:

1.11. Մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման համակարգի զարգացման հայեցակարգը: Այն ՀՀ կառավարություն կներկայացվի 2009 թվականին:

1.12. Մշակվել է գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման սկզբունքները և չափանիշները:

1.13. Մշակման փուլում է Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը: ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը կներկայացվի 2009 թվականի ընթացքում:

1.14. Մշակվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, թեմատիկ (պայմանագրային) և նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգեր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի NN 1121, 1122, 1123 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

1.15. Մշակվել է գիտության երիտասարդացմանն ուղղված ծրագիր: Գիտության երիտասարդացմանն ուղղված մի քանի միջոցառումներ արդեն իսկ իրականացվել են 2008 թվականի ընթացքում և նախատեսված են նաև ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում: Մասնավորապես, 2008 թվականից սկսած ֆինանսավորվում են պայմանագրային (թեմատիկ) ֆինասավորմամբ իրականացվող նոր գիտական թեմաները, որոնց մասնակիցների առնվազն 25%-ը երիտասարդ մասնագետներ են (մագիստրոսներ կամ ասպիրանտներ):

Գիտաժողովների կամ գիտական գործուղումների հայտերի քննարկման ժամանակ ևս առաջնայնությունը տրվել է երիտասարդ մասնագետներին (մինչև 35 տարեկան):

2008 թվականի ընթացքում կոմիտեի ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել է 2 երիտասարդական դպրոց՝ մեխանիկների և մաթեմատիկոսների համար:

1.16. Իրականացվել են աշխատանքներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման ուղղությամբ: Մասնավորապես, ստեղծվել է հանձնաժողով՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, մշակվել և ամփոփվել է վերոնշյալ օրենքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների փաթեթը:

2008 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները

1. **«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» և «Գիտության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկներին գույք ամրացնելու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի N 158-Ն որոշմամբ),
2. **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1019-Ն որոշմամբ),
3. **«Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի N 1540-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 1429-Ն որոշմամբ),
4. **«Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1555-Ն որոշմամբ),
5. **«Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքների և չափանիշների մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1558-Ն որոշմամբ),
6. **«Երևանի պետական համալսարանի երկրաբանական հետազոտությունների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հիմնադրելու թույլտվություն տալու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1570-Ա որոշմամբ),
7. **«Հայաստանի Հանրապետությունում Աստղագիտության օրը նշելու մասին»** (հաստատվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N-13-Ն որոշմամբ):

Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցություն

Գիտության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման ու զարգացման նպատակով կոմիտեի կողմից մշակվել են հետևյալ պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերը՝

- «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի միջև համագործակցության մասին»: Պայմանագիրը ստորագրվել է 2009 թվականի հունվարի 20-ին:
- «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի միջև համագործակցության մասին»: Համաձայնագիրը համաձայնեցվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ բելառուսական կողմին ներկայացնելու համար:
- «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի միջև համագործակցության մասին»: Համաձայնագիրը համաձայնեցվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ռուսական կողմին ներկայացնելու համար:
- «Հայաստանի Հանրապետության գիտության պետական կոմիտեի և Ռումինիայի գիտական հետազոտությունների ազգային մարմնի միջև գիտական և տեխնոլոգիական համագործակցության մասին»: Համաձայնագիրը ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ռումինական կողմին փոխանցելու համար:
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում համագործակցության մասին»: Համաձայնագրի նախագիծը լրամշակվել է համաձայն ՀՀ գերատեսչություններից ստացված կարծիքների և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ամերիկյան կողմին ուղարկելու համար:

Բացի դրանցից,

- ՀՀ արտաքին գործերի նախարարության առաջարկությամբ մշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրերի նախագծերը: Համաձայնագրերը լրամշակվել են ՀՀ շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքների հիման վրա և ներկայացվել ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ կողմերի հետ համաձայնեցնելու նպատակով:
- Ուսումնասիրվել և գիտության մասով առաջարկություններ են ներկայացվել միջազգային ոլորտում համագործակցության մի շարք գործնական ծրագրերի, պայմանագրերի և համաձայնագրերի վերաբերյալ, այդ թվում՝ Մոսկվայի մարզի

կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2009-2011թթ. ժամանակահատվածում առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համատեղ ծրագրի, ՀՀ կառավարության և ՌԴ Չելյաբինսկի մարզի կառավարության միջև համաձայնագրի, գիտական ոլորտում հայ-իրանական համագործակցության ծրագրի նախագծերի վերաբերյալ:

2008 թվականին իրականացվել է ԻՆՏԱՍ 9 ծրագրերի համաֆինանսավորում և կազմակերպվել է ՄԳՏԿ 20 ծրագրերի փորձաքննություն: 2008 թվականի ընթացքում իրականացման փուլում էին գտնվում FP6 2, FP7 2 ծրագրերը և ՄԳՏԿ-ի կողմից հաստատվել է ՀՀ գիտական կամ գիտակրթական կազմակերպություններից ներկայացված 13 ծրագիր:

Ծրագրերի ֆինանսավորում

Ծրագիրը	Քանակը
Թեմատիկ (պայմանագրային)	711
Բազային (հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ)	85
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում	86
Նպատակային-ծրագրային հետազոտություններ	6
Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	3
Գիտական գործուղումներ, գիտաժողովների մասնակցություն	14, 17

2008 թվականի սեպտեմբերից բոլոր ծրագրերով ֆինանսավորումները իրականացվում են հստակ ժամանակացույցով՝ մինչև յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային շաբաթվա ավարտը: